

Տ. ՓԱՌԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՎԵՏԻՔՅԱՆ

Ծնվել է Բեյրութում (Լիբանան), 1939 թ.:

Ուսանել է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Անթիլիասի Դպրեվանքում, ապա՝ Բեյթ Մերիի Անկախ Դպրեվանքում և Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Ընծայարանում:

1960 թ. ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1963 թ. ուսումը կատարելագործելու նպատակով մեկնել է ԱՄՆ, սովորել ամերիկյան մի շարք համալսարաններում:

1964 թ. սկսած ուսմանն առընթեր հովվական պաշտոններ է վարել Հյուսիսային Նյու Յորք նահանգի, Վաշինգտոնի, Միչիգան նահանգի Դետրոյտ և Իլինոյս նահանգի Չիկագո քաղաքների Հայաստանյայց Առաքելական եկեղեցիներում:

1967 թ. ստացել է վարդապետական, իսկ 1975 թ.՝ ծայրագույն վարդապետական աստիճաններ:

Երկու հաջորդական չորս տարիների համար ընտրվել է Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի թեմական խորհրդի անդամ: 1977-1999 թթ. եղել է Արևելյան թեմի միության հանձնախմբի ընտրյալ անդամ:

Դետրոյտում նրա պաշտոնավարության տարիներին ամբողջությամբ վերանորոգվել է Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու համալիրը, կառուցվել են Երիտասարդական կենտրոնը, պատմության և գեղարվեստի Մանուկյան թանգարանը, Մարտիկյան գրադարանը: Նրա շնորհիվ հայտնաբերվել, ի մի է բերվել, վերծանվել և ցուցադրության ներկայացվել պատմության և գեղարվեստի Մանուկյան թանգարանի ողջ հավաքածուն:

1988-1993 թթ. Դետրոյտում իր նախաձեռնությամբ և մղումով շուրջ 2 մլն դոլար է հանգանակվել՝ ի նպաստ Հայաստանի և Արցախի կարիքների:

1996 թվականից ի վեր ծառայության է անցել Հայաստանում: Նշանակվել է նախ՝ որպես փոխանորդ, ապա՝ տեղապահ Շիրակի թեմում:

2000 թ. հունվար ամսից Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ նշանակվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարանների տնօրեն: